

ՀԱՅԿԱԿԱՆ ՊՂՆՁԵՂԷՆԻ ՍԱՐԳԻՍ ԶԱՄՊԱՔՃԵԱՆԻ ՀԱՒԱՔԱԾՈՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ (adakessian@haigazian.edu.lb)

ՄՈՒՏՔ

Լիբանանի հայօճախի յետեղեռնեան մշակոյթի պատմութեան իւրօրինակ երեւոյթներէն է հնահաւաքներու պարագան: Թէեւ պատմականօրէն Հալէպը եղած է Արեւմտեան Հայաստանի, Կիլիկիոյ եւ Փոքր Ասիոյ հայաբնակ այլ տարածքներու մօտիկ վայրը, ուր բերուած են պապենական տարածքներէն յայտնաբերուած, եղեռնեան ատարէն ու կողոպուտէն մնացած հայկական հնութիւններ, սակայն Պէյրութը ըլլալով նիւթապէս բարեկեցիկ, այդ գտածոներէն գէթ մաս մը անցած է Պէյրութէն, ուր կա՛մ հանգրուանած են անոնք, կա՛մ - իրենց մեծարժէքութեան պատճառով - Պէյրութի վրայով դրկուած են Արեւմուտք¹ եւ կամ նուիրաբերուած Հայաստանի, Կիլիկիոյ կաթողիկոսութեան, Զմմառի հայ կաթողիկէ վանքի, կամ այլ թանգարաններու:

Պէյրութի մէջ հայկական հնութիւններով զբաղողներ եղած են 1930-40ականներէն սկսեալ, ինչպէս՝ Անուշաւան Էպէեան², աւելի ետք՝ Պերճ Կարապետեան³, Կիրակոս Մխճեան, գեղանկարիչ Յարութիւն Թորոս-

¹ Արեւմտահայ հնութիւններու աղբիւր է նոյնինքն արմատախլուած հայերուս մեր հետ բերած պապենական նիւթական ասանդները, յիշատակները՝ տպագիր *Ասորուածաշունչ*եր, ձեռագրեր, պղնձեայ իրեր, հիւսուածեղէն, կալուածաթուղթեր, լուսանկարներ եւն.: Յիրաւի, մինչեւ այսօր տակաւին լիբանահայ շատ տուններու մէջ կարելի է հանդիպիլ պապենական նման հոգեպահուստներու, որոնցմէ ոմանք ի պահ դրուած են տուներու ձեղնայարկերը, իսկ ուրիշներ՝ կը ցուցադրուին տան ցուցապահարանին մէջ:

² Յայտնի հնագէտ դրամագէտ Անուշաւան Էպէեան (1913-1996), ծնած է Իզմիտ: Երախտաշատ աշխատանք տարած է հայ հնագիտութեան մասնագէտներու պատրաստման առումով: Հեղինակ է դրամագիտական ուշագրաւ ուսումնասիրութիւններու՝ *Արաբահայ դրամագիտական պատմութիւն/Histoire numismatique Arabo-Armenienne (632-892 Après J.C.)*, տպ. Փիւնիկ, Պէյրութ, 1940. նաեւ՝ *Կիլիկիոյ հայոց թագաւորները իրենց տպած դրամներով (1198-1393)*, տպ. Մշակ, Պէյրութ, 1973. նաեւ՝ *Հայութեան անծանօթ իր երկրորդ կայսրութիւնը. Շահ ԷլԱրմէն/Deuxieme empire armenien les Chah-El-Armens, dynastie des Ayyoubides (586-658 H. 1190-1259)*, տպ. Մշակ, Պէյրութ, 1981: 1961էն իվեր Էպէեանի հնագիտական հաւաքածոյին հայկական նիւթերը կը ցուցադրուին Զմմառու հայ կաթողիկէ վանքին թանգարանը:

³ Կարապետեան պղնձագիտական ուսումնասիրութիւններով աշխատակցած է *Հայկազեան հայագիտական հանդէսի* 2. եւ ԺԲ. (1977-8 եւ 1992) հատորներուն, դրամագիտական թէ այլ ուսումնասիրութիւններով աշխատակցած է նաեւ *Սփիւռքին*, Կիլիկիոյ կաթողիկոսութեան Հասկին՝ եւն.: Կիլիկիոյ հայոց կաթողիկոս Գա-

եան⁴, Ասպետ Տօնապետեան⁵, Արա Արծրունի⁶, կենսաբանութեան երկարամեայ ուսուցիչ Մայք Պօղոսեան, Երուանդ Ապաճեան, Սասուն Սիմոնեան եւն.: Դեռ աւելին, 1971-2ին կազմուած է խմբակ մը՝ «Լիբանանեան ժառանգը պահպանելու սատարող լիբանահայ միութիւն» անունով⁷:

Այդ խմբակին մաս կազմած է նաեւ Սարգիս Զամպաքճեան, որուն պղնձեղէնի հաւաքածոյին համառօտ նկարագրութիւնը կը ներկայացնենք ստորեւ⁸:

րեգին Յովսէփեանց զինք ղրկած է Փարիզ մասնագիտանալու, որպէսզի վերադարձին ստանձնէ Կիլիկիոյ կաթողիկոսարանի թանգարանի տնօրէնի պաշտօնը: Սակայն, Կարապետեանի վերադարձէն առաջ վեհափառը վախճանած ըլլալով, ծրագիրը կը մնայ անաւարտ:

⁴ Յարութին Թորոսեան (1933-2022), Լիբանանի վաւերական գեղանկարիչներէն է, արուեստի երկարամեայ դասախօս՝ Լիբանանեան ԱԼՊԱյի մէջ: Դասաւանդած է նաեւ Հայկազեան համալսարանի մէջ: Հեղինակ՝ *Խոհեր կեանքի եւ արուեստի մասին* (1995), *Դիւրանկիւնէս* (2008) գիրքերուն: Հրատարակած է նաեւ իր ստեղծագործական գեղանկարներուն նկարագիրքերը:

⁵ Յայտնի դրամագէտ, երկարամեայ կրթական մշակ Ասպետ Տօնապետեան (1923-93), դրամագիտական ուսումնասիրութիւններով աշխատակցած է *Հայկազեան հայագիտական հանդէսի* Ա., Բ., Է., Ը. եւ Ժ. (1970, 1971, 1979, 1980 եւ 1982-84) հատորներուն: Այս ուսումնասիրութիւնները յետագային ամփոփուեցան *Էջեր հայ դրամագիտութեան պատմութեան* գիրքին մէջ (խմբ.՝ Երուանդ Քասունի, United printers & traders, Պէյրութ, 2006): 1989ին կը տեղափոխուի Մ. Նահանգներ:

⁶ Արա Արծրունի (1932-2018) - վիպագիր, թատերագիր, հրապարակագիր, աշխատակցած է *Ազդակին*, *Արծիփն*, *Բագինին*, *Կամարին*, *Սփիւռքին*, բեմադրած է նաեւ փիլեսներ: 2012էն անդամ՝ Հայաստանի գրողներու միութեան, 2017ին արժանացած է Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Ա. Մեսրոպ Մաշտոց»ի շքանշանին: Հեղինակ է շարք մը գիրքերու՝ *Վիրատոր ծիծեռնակը* (1967), *Եղեռնի հետքերով* (1972), *Ես զոհ-ես դահիճ* (Երեւան 1993, Պէյրութ 1995), *Ողջո՛յն (թաւերգութիւն 3 արար)* եւ *Պահածոյի փոփերը (թաւերգութիւն 3 արար)* (2006), *Անաւարդ վէպը* (2006), *Մարիօ՛, ծաղկա՛ծ են արդէն ծառերը. թաւերգութիւն 3 արար* (2008), *Թաւերգութիւններ երկու հափորով* (2010), *5 թաւերգութիւններ* (2012), *Ծուէնները* (2017):

⁷ Խմբակին անդամակցած են Էպէեան, Թորոսեան, Գրիգոր Թերզեան, Մանուկ Հովսէփեան, Երուանդ Տարագճեան, Արա Արծրունի, Պօղոսեան (որուն անունով պետականօրէն արձանագրուած էր միութիւնը): Խմբակին կազմակերպիչն էր Էպէեան որ անտղղակի կը ղեկավարէր զայն: Խմբակը ամէն Ուրբաթ կը հաւաքուէր անդամներու տունները: Հանդիպումները ծառայած են անդամներուն միջեւ կրկնօրինակներու փոխանակման: Անոնք դադրած են Լիբանանի պատերազմին բռնկումով (անձնական տեսակցութիւն Պօղոսեանի հետ, 15 Սեպտեմբեր 2022):

⁸ *Ազդակի* 13 Յունիս եւ *Զարթօնքի* 4, 9, 21, 28 Յունիս, 16 եւ 19 Յուլիս 2022ի (եւ յաջորդող) թիւերուն մէջ, ինչպէս նաեւ դիմատետրի վրայ գետեղեցինք յայտարարութիւն՝ բաղնիքի կափ թասերու շուրջ մեր ձեռնարկած ուսումնասիրութեան առնչութեամբ: Այս յայտարարութեան արձագանգողներէն եղաւ Զամպաքճեան, որուն հետ մեր ունեցած հանդիպումներուն (24, 29 Յուլիս, 17 Սեպտեմբեր 2022) արձանագրեցինք իր մօտ գտնուած հայկական պղնձեղէնը:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՔԱԾՈՅԻՆ

Հաւաքածոն կը բաղկանայ 49 իրէ: Ան կ'ընդգրկէ մօմակալ մը, տիփթեր⁹ (կաղամարներ), բաղնիքի ջրամաններ¹⁰, բաղնիքի օգտագործման տուփեր, տարբեր չափերու պնակներ ու ամաններ, պտղամաններ: Ասոնց բոլորն ալ արձանագրութիւններ ունին, կամ՝ կնիքներ, բացի թիւ 5 տիփթէն: Հաւաքածոյէն երկու իրեր յունարէն (նկ. 25, 49) արձանագրութիւն ունին: Երկու այլ իրերու (նկ. 16¹¹, 24) ընթերցումը չկրցանք կատարել¹²: Իսկ առկայ հինգ տիփթերէն թիւ 4ը արաբերէն անընթեռնելի արձանագրութիւն, մինչ թիւ 5ը արձանագրութիւն չունի (Այդ պատճառով ալ չենք ընդգրկած վերջին երկուքի նկարները):

Ատորեւ աղիւսակի ձեւաչափով կը ներկայացնենք հաւաքածոն, ըստ տեսակի: Աղիւսակին մէջ տուած ենք արձանագրութիւն/կնիքը, չափագրութիւնը (բարձրութիւն, մետաղի հաստութիւն, տրամագիծ, կշիռք եւն.): Լուսանկարներով տուած ենք իւրաքանչիւր արձանագրութիւն, նաեւ՝ միջանի բացառիկ իրերու այլ լուսանկարներ:

Զամպաճքեան իր հաւաքածոյին ծննդոցին մասին հետեւեալը պատմեց մեզի. «...1981ին Կիրակոս Մխճեանը ինծի բերաւ չորս հափ փոքր պնակներ՝ ծախելու: Երբ տեսայ որ վրան հայերէն գրութիւններ կան, որոշեցի ինծի պահել: Իրեն վճարեցի ուզածը եւ ապրիլա եղաւ սկիզբը իմ հաւաքչական աշխատանքիս: Հալէպ ամէն ճամփորդելուս կ'երթայի բերդին կողմերը, ուր կային հնավաճառներ. հաւաքածոյիս մեծ մասը անոնցմէ գնած եմ: Պէյրութ ալ, Պուրճ Համուրի մայրուղիին վրայ պղնձագործները կային, հոն ծանօթացեր էի Մանուէլ Գարամինասեանին, որ պղինձի գործով կը զբաղէր: Անոր ըսած էի թէ հայկական իրեր կը հաւաքեմ: Իրեն կը հանդիպէի պարբերաբար. երբ ձեռք անցընէր՝ ինծի կը վերապահէր: Բայց մեծամասնութեամբ Հալէպէն գնած եմ: Վերջին կտորը գնեցի 2008-09ին: Ամէն անգամ

⁹ Բացի տիփթերէն միւս բոլորը կարմիր պղինձ են: Տիփթերուն մասին տե՛ս՝ Պերճ Կարապետեան, «Տիփթ կոչուած թափծու գրչակալ կաղամարներ հայերէն արձանագրութիւններով», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԺԲ:1992, էջ 81-106. նաեւ Անդրանիկ Տազէսեան՝ «Յաւելեալ տեղեկութիւններ եւ նորութիւններ հայկական տիփթերու մասին», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԼԱ:2011, էջ 643-62 ուսումնասիրութիւնները:

¹⁰ Թասերուն մասին տե՛ս՝ Անդրանիկ Տազէսեան, «Ակնարկ հայկական արձանագրութեամբ պղնձեայ թասերու վրայ», *Հայկազեան հայագիտական հանդէս*, 42/1:2022, էջ 339-50:

¹¹ Այս իրին արաբերէն արձանագրութիւնը միայն կրցած ենք կարդալ:

¹² Ըստ հայրենի վիմագրագէտ Արսէն Յարութիւնեանի՝ արձանագրութեան «որոշ տառեր արաբերէն թուերի են նման, ուստի նաեւ այդ գործօնը պիտի նկատի առնել: Մէկ-երկու տառ նման է հին վրացերէն գլխագրերին: Բայց դա էլ վարկած է, բայց յամենայն դէպս [գրութիւնը] հայերէն չէ» (ելնամակներ, 10 եւ 12 Օգոստոս, 2022):

որ հայկական հնութիւն մը ծեռք անցընեմ այն զգացումը կ'ունենամ թէ ստորգ կորուստէ կը փրկեմ մեր ժողովուրդին պատկանող յիշատակարան մը: 1988ին, հայերէն արձանագրութեամբ չորս պղնձեայ պնակ տուի հայր Յարութիւն Պզդիկեանին՝ նուիրելու Վենետիկի Ս. Ղազարի Մխիթարեան միաբանութեան թանգարանին, նաեւ՝ ծխախոտի արծաթեայ տուփ մը»: Ան կատարած է նաեւ այլ կարեւոր նուիրատուութիւն մը՝ Անիի հնավայրէն պեղուած հայերէն արձանագրութեամբ խնկաման մը, Էջմիածնի թանգարանին:

Զամպաքճեան ծնած է Հալէպ, 1946ին, յաճախած Հալէպի Յիսուսեան միաբանութեան Վարդանանց վարժարանը, տնօրէն ունենալով հայր Սահակ Քէշիշեանը¹³: 1960ին աւարտելէ ետք նախակրթարանը կ'աշխատի ատաղձագործ հօր քով, որ միաժամանակ հին կահոյք կը նորոգէր: 1965ին կ'անցնի Պէյրութ եւ կը հաստատուի Պուրճ Համուտ, կը լծուի կահոյքի նորոգութեան գործին: Ինք կը պատմէ կեանքին անկիւնադարձային հետեւեալ դրուագը. «...Անգամ մը Պէյրութը պտտելով հասայ մինչեւ Մանարա, Բաուշէ, յետոյ երբ հանդիպակաց բնակելի կողմը անցայ, տեսայ կալերի մը՝ Կալերի Խուրի: Հնավաճառ էր: Ներսէ չնորոգուած կահոյք մը կար, որմէ մենք նորոգած էինք: Ֆրանսական 18րդ դարու կահոյք էր: Ներս մտայ մօտէն դիտելու. մինչայդ պաշտօնեան եկաւ, սկսաւ հարցնել թէ ինչ կ'ուզեմ ... Ես փոքր տղայ, իրենց հետ կապ չունիմ, բայց զարմանալիօրէն կը հետաքրքրուիմ այդ կահոյքով: Կասկածելով՝ ըսաւ որ դուրս ելլեմ: Մարդը միջանի անգամ կրկնեց: Ես չելայ դուրս, ընդհակառակը, հարցուցի՝ «ինչու՞ այս պուլը չէ նորոգուած»: Գրասեղանին ետեւը նստած մարդը, բուն տէրը, զարմացած, ելաւ տեղէն, եկաւ՝ «դուն ինչէ՞ն գիտես որ ասիկա պուլ է, ինչպէ՞ս գիտես որ չէ նորոգուած» հարցուց: Ըսի՝ «Այո՛, գիտեմ, ես կը նորոգեմ ասի» ու բացապրեցի թէ հայրս կը նորոգէր ես ալ քովը սորված եմ եւն.: Ան գանգապեցաւ որ Ֆրանսա նորոգութեան տուած էր կահոյքը, բայց նորոգութիւնը անյաջող եղած էր: Պնդեցի որ ես կը նորոգեմ, բայց գործապեղի չունիմ: ...Ինծի կալերիին վերի յարկը սենեակ մը տուաւ: Նորոգութեան համար իրմէ ուզեցի 300 լիբանանեան ոսկի, մինչ ամսականները շուրջ 100 լիբանանեան ոսկի էին...: Համաձայնեցանք: Իրմէ 25 ոսկի առի, որ գործիք գնեմ: Մարդը վստահեցաւ, հակառակ որ առաջին անգամ կը տեսնէր գիւս...: Յաջորդ օրը գնեցի անհրաժեշտ գործիքները, եւ հակառակ որ չէի գիտեր հասցէն, հարցուփորձելով հասայ վայրը եւ գտայ կալերին: ...Նորոգութիւնը տեւեց 10 օր: Մարդը շարք հաւնեցաւ, ինծի ցուցուց 10 կտոր: Համաձայնեցանք որ մէկ առ մէկ սկսիմ նորոգել. իւրաքանչիւրի նորոգութեան համար համաձայնեցանք 500 լիբանանեան ոսկի: ... Երկու տարի իր գործերը նորոգեցի, երկու տարուան մէջ իրմէ շահած դրամով տուն մը գնեցի 27,000 լիբանան-

¹³ Իր մասին տե՛ս՝ Հայր Անդրանիկ վրդ. Կոստեան, «Հայր Սահակ վրդ. Քէշիշեան», Հայկազեան հայագիտական հանդէս, ԻԶ:2006, էջ 434-35:

եանի: Յեպոյ սկսայ օրիանթալ սնտուկի գործին, անոնց կրկնօրինակները ըրի, մեծ պահանջարկ ունեցան այս նորերը, որոնք հինին շատ նման էին...»:

Զամպաքեան իր առաջին եւ միակ վաճառատունը՝ Antiquités Beaux Arts կը բանայ 1978ին, իր կրտսեր եղբոր՝ Վազգէնին հետ, Պէյրութէն Անթիլիաս, ծովային մայրուղիին վրայ, Ժալ ԷլՏիպի շրջան: Վաճառատունը, ուր կը վաճառուէին հին կահոյք, ապակեղէն, պրոնզեայ իրեր, ժամացոյցներ, արձաններ եւն., կը գործէ մինչեւ 2019: «Երբ խանութը բացի, արդէն ծանօթացեր էի հնավաճառ վաճառականներու դիմեցի գորգավաճառի, ջահավաճառ Մուդաննիին, որոնք ինձի աւանդ տուին բաւական ապրանք, յետոյ սկսայ Պասթայի հնավաճառներու շուկայէն գնել եւ նորոգել»: Յաջողութիւն գտնելով, Զամպաքեան 1982ին, Ֆրանսայէն առաջին անգամ կը ներածէ մեծաքանակ հին կահոյք: Նորոգութեան յատուկ աշխատանոց մը կը հիմնէ Պուրճ Համուտի հայոց գերեզմանատան մօտակայ արհեստանոցներու շուկային մէջ, 1978ին: «Յաճախորդներուս մեծամասնութիւնը հարուստ լիբանանցիներ էին: Այն ատեն Լիբանանը փլթի Փարիս էր, Արեւելքի Զուիցերիան, Լիբանան փոքր երկիր էր, բայց շրջանի դրամը հոս էր, հարուստ երկիր էր, իսկ լիբանանցին զարգացած էր, ճաշակի տէր, կը սիրէր աղուոր առարկայ, կահոյք ունենալ տունը: Երբեմն, ամառը կու գային Ծոցի երկիրներու արաբները, նաեւ եւրոպացիներ, Ծոցի արաբները կը գնէին, իսկ եւրոպացիք՝ զբօսաշրջիկ էին: ...Պէյրութի մէջ, որպէս կալերի, հայ հնավաճառ չկար, մենք միակ հայն էինք, բայց տեղացիներ կային, մանաւանդ՝ քրիստոնեաներ: Յեպոյ տեղացի իսլամներ շատցան նոյն գործին մէջ: Մինչեւ այսօր այս գործը ընող հայ չկայ»:

Զամպաքեան, հայկական պղնձեայ իրերէ բացի կը հաւաքէ նաեւ Վանի արծաթէ ծխախոտի տուփեր, հին հայկական դրամներ եւն.: Իր հաւաքածոյէն իրեր ցուցադրուած են Լիբանանի մէջ հայկական մշակոյթին նուիրուած ցուցահանդէսներու ընթացքին: Ան կը պնդէ. «Որեւէ բան որ հայկական է՝ անկարելի է որ ծախեմ: Հայկական պղինձի առեւտրորով երբեք չեմ զբաղած: Միայն գնած եմ: Ասի իմ նախասիրութիւնս է»¹⁴:

ԱՄՓՈՓԻՉ ՏՈՒԵԱԼՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Անձնանուններ եւ Ազգանուններ

Հաւաքածոյին իրերուն վրայ եղած արձանագրութեանց մեծամասնութեան մէջ կը հանդիպինք հետեւեալ անձնանուններուն, որոնցմէ ոմանց՝ աւելի քան մէկ անգամ.- Աբրահամ, Ակոբ, Աննա, Ապէտ, Արսլան[եան], Աստուածատուր, Ատուր, Արապ Օղլի Կարապետ, Արութին, Աւետիս, Գաւաթար, Գրիգոր, Դաիթ, Եդգար, Եղիայ, Եուսուֆ, Թմաճան, Լուսեայ, Խանըմ, Կարապետ, Հօօթըմա, Ղազար, Մանուկ, Մարիք/Մարիֆ, Մարտի-

¹⁴ Անձնական հարցազրոյց Սարգիս Զամպաքեանի հետ, 29 Յուլիս 2022ին:

րոս, Մելքոն, Մինա, Մկրտիչ, Յակոբ, Նահապետ, Ներսէս, Պաղտասար, Պապա, Պետրոս, Սարգիս, Սելվեր, Վարդան, Տիքրանույի:

Կը հանդիպինք նաեւ զանազան ազգանուններու.- Գահկեճեան, Գահվեճեան, Թանաշեան, Թութինճեան, Խալօեան, Հճեան, Ղազանճեան, Ճեմալերճեան (արաբերէն՝ جمبرجيان), Չովլակեան, ΧΤΖΙΜΟΥΡΑΤ [իանի Մուրատ], ΚΟΣΤΑΝΤΗ ΧΑΤΖΙΣΤΕΦΑΝΙ¹⁵ [Կոստանդի Խաժիսթեֆանի]:

Տեղանուններ

Վերոյիշեալ արձանագրութեանց մէջ հազուադէպ են տեղանունները՝ Երուսաղէմ, Ս. Յակոբա[յ] Վանք եւ Երուսաղէմի Ս. Աստուածածնայ գերեզման:

Թուականներ

Հաւաքածոյին արձանագրութիւններէն շատեր կը կրեն թուականներ, ոմանք՝ արաբատառ, ուրիշներ՝ հայկական, ուրիշներ՝ մահմետական: Զանոնք կու տանք ժամանակագրական յաջորդականութեամբ.- ՌՃԾԶ [1156+551=1707], ՌՃԿԴ [1164+551=1715], ՌՃՀԳ [1173+551=1724], ՌԲՃԱ [1201+551=1752], 1801, ՌՄՀ [1270+551=1821], [արաբերէն] 1268 [=1852], 1874, [արաբերէն] 1298 [=1880], 1895, 1896, 1901, 1903, 1906, [1]923, [1]929:

Կնիքներ

Պղնձեայ այս հաւաքածոյին մէջ կը հանդիպինք եօթ կնիքներու, որոնցմէ մին՝ միքանի իրերու վրայ.- Ատուր, Արսլան[եան], Գրիգոր Թանաշեան 929, Հճեան, Յակոբ, Չեմալերճեան (արաբերէն՝ جمبرجيان), Սարգիս:

Յապաւումներ եւ կցագրեր

Գրեթէ բոլոր պարագաներուն ալ մահտեսի/մղտսի բառը յապաւուած է «ՄՀԻ»:

Արձանագրութիւններուն վրայ կը հանդիպինք նաեւ բազմաթիւ տառերու միակցումներու՝ կցագրերու: Ընդհանրապէս անոնք երկու տառերու կցումներ են.- Ա եւ Ր (12 անգամ), Ա եւ Ն, Դ եւ Ի (5 անգամ), Ե եւ Ա, Թ եւ Վ, Ի եւ Ն, Ի եւ Ի, Մ եւ Ա (ուշագրաւ է որ երբեմն Ա, իսկ երբեմն Մ գիրը առաջնային է), Ն եւ Ա, Ն եւ Ի, Ո եւ Ր, Ո եւ Ի, Պ եւ Ե, Ս եւ Ի: Կայ միակ պարագայ մը երբ երեք տառեր կցուած են իրարու՝ Ս-Ր-Բ, գոյացնելու համար սուրբ բառը:

Նշումներ՝ առանձնացող երեւոյթներու մասին

ա) Թիւ 17 նկարին արձանագրութիւնը՝ Թումաճանի որդի Եղիա, ուշագրաւ է իր Ճ գիրով: Զայն առանձնացուցած ենք նկար (17բ), քանի որ փորագրիչը զայն վերածած է գեղեցիկ թռչունի: Մեզի կը թուի թէ նման

¹⁵ Թիւ 25 եւ 49 իրերուն արձանագրութիւնը վերձանեց Յովիկ Գասապեան, որ իր երկտողին մէջ (9 Օգոստոս 2022) կը նշէ նաեւ թէ թիւ 49ի արձանագրութեան մէջ «կայ ուղագրական սխալ Κ (ο) ΣΤΑΝΤΗ պէտք էր գրուի Σով»:

գեղագիտական փոխակերպումները հազուադեպ են հայկական պղինձի արձանագրություններու պարագային:

բ) Կարելի չեղաւ վերծանել թիւ 4 տիւթի եւ նկարներ 7բի արաբատառ գեղեցիկ արձանագրությունները, թիւ 16բի եւ թիւ 24ի արձանագրությունները:

գ) Յատկանշական է նկար թիւ 47բ՝ խորունկ մեծ ամանի ներքին յատակին փորագրութիւնը. բուսանախշերով եւ կենդանանկարներով շրջապատուած կեդրոնական շրջագիծին մէջ նկատելի նրբութեամբ փորագրուած է ծիու վրայ նստած իշխանաւոր մը: Ան իր գլխուն ունի թագ եւ հաւանաբար քրիս-տոնեայ է, որովհետեւ թագին վրայ կ'երեւին երեք տերեւանման նախշեր: Մեզի կը թուի թէ այդ երեքը կը խորհրդանշեն Ս. Երրորդութիւնը, որով եւ կ'ենթադրուի անոր քրիստոնէութիւնը:

ARMENIAN COPPER UTENSILS: THE COLLECTION OF SARKIS ZAMBAKDJIAN

(SUMMARY)

ANTRANIK DAKESSIAN (adakessian@haigazian.edu.lb)

The paper is a report on the Armenian copper utensils collection of Sarkis Zambakdjian, a Lebanese Armenian who has been collecting these items since 1988.

The collection is comprised of 50 items, mostly dishes and plates of different sizes, some candlesticks, bath *tasses*, bath boxes, and *divits*. All but 3 items have no Armenian inscriptions or stamps identifying the craftsman on them.

The article describes all the items, gives their specifications (weight, height, width, diameter, thickness of the copper). Furthermore, the article decodes all the Armenian inscriptions engraved on the items, provides photos of the inscriptions, and the stamps identifying the craftsman as well as some outstanding ornaments and designs which have high artistic and creative value.

The article lists all the proper names of individuals and locations as well as the dates mentioned in the inscriptions.

The paper decodes two Greek inscriptions but falls short of reading one of the four Arabic inscriptions.

թիւ	Տեսակ	Գրութիւն եւ թուական	Չափեր (սմ.)	Հաստթն. եւ ծնրթն.	Նշումներ
ՏԻԻԻԹԵՐ					
1	Տիկիթ	ՅԱԿՈԲ ԳԱՀԿԵՃԻՏԵԱՆ Ունի երկու կնիք՝ ՍԱՐԳԻՍ, անընթ. թուական	Երկայնք՝ 23, բրձր.՝ 3, լայնք՝ 1.5	348 կր.	Թանաքանանը կախարիչ չունի
2	Տիկիթ	ՂԱԶԱՆՃԵՆԱՆ ԱԿՈԲ [արաբ.] 1291 [=1874], ունի կնիք՝ ՅԱԿՈԲ	Երկայնք՝ 23, բրձր.՝ 2.7, լայնք՝ 1.2	300կր.	Թանաքանանին տակինը նոր կտոր
3	Տիկիթ	Գրութիւն չունի. ունի մէկ կնիք՝ ԱՏՈՒՐ	Երկայնք՝ 23.8, բրձր.՝ 3.4, լայնք՝ 1.6	283 կր.	Թանաքանան չունի
4	Տիկիթ	Արաբերէն անընթեռնելի գրութիւն	Երկայնք՝ 19, բրձր.՝ 2.8, լայնք՝ 1	255 կր.	Կրթն դէպի բերան՝ չափերը կը մեծնան. կնիք չունի
5	Տիկիթ	Գրութիւն չունի	Երկայնք՝ 19, բրձր.՝ 2.2, լայնք՝ 1.3	205 կր.	Թանաքանանին կախարիչը ուրիշ տեսակ է, խաչի փոխարէն եռանկիւն մը ունի, նախշում է ամբողջութեամբ
ԽՆԿԱՆՆԵՐ					
6	Խնկանան	ԱՊԷՏ արաբերէն անընթեռնելի գրութիւն	Բարձր.՝ 12.5, տրամագիծ՝ 16, յատակի արտաքին տրամագիծ՝ 12	Հտթն.՝ 1.6-2 մմ., 614 կր.	Զարդանախշում է շրթոնք եւ՝ անանիւն ամբողջ լեւարան հատումը։ Սարդակերպ զարդանախշ
7	Խնկանան	ԳՐԻԳՈՐԻ ՈՐԴԴԻ ՎԱՐԴԱՆ [ԴԻ, ԱՐ՝ միացում]	Բրձր.՝ 12.3, տրամագիծ՝ 15.5, յատակի արտաքին տրամագիծ՝ 11.5-12.5	Հտթն.՝ 0.9-1.5 մմ., 647 կր.	Զարդանախշում է՝ շրթոնքը եւ՝ անանիւն ամբողջ լեւարան հատումը. զարդանախշերը՝ բուսական
Բաղնիքի ջրի թամբ					
8	Բաղնիքի ջրի թաս՝	ԱՆՆԱ ԽԱԼԾԵԱՆ 1903	Բրձր.՝ 7.5, տրամագիծ՝ 21	Հտթն.՝ 1 մմ., 618 կր.	Յատակը անտորրկ, նախշեր՝ վրձն մինչեւ անկիւնատր կտրուածքը
9	Բաղնիքի ջրի թաս	ԼՈՒՍԵԱՅ ԳԱՀՎԵՃԵԱՆ 1895 [Ե/Ա միացում]	Բրձր.՝ 7.5, տրամագիծ՝ 21	Հտթն.՝ 1 մմ., 674 կր.	Յատակը անտորրկ, նախշեր՝ վրձն մինչեւ անկիւնատր կտրուածքը
10	Բաղնիքի ջրի թաս	ԱՆՆԱ ՉՈՂՎԱԼՎԵԱՆ 1903 [Ո/Ի միացում]	Բարձր.՝ 8, տրամագիծ՝ 21	Հտթն.՝ 1 մմ., 614 կր.	Յատակը անտորրկ

¹ Այս եւ լաջորդ երեք բաղնիքի ջրի թամբը չեն ընդգրկում մեր՝ «Անարկ իսլական արձանագրութեամբ» ուսումնասիրութեան մէջ։

11	Բաղնիքի ջրոյի թաս	ԽԱՆՆԱՄ 1894 [թաւականը արաբերէն] 1896	Բաժը՝ 7, տրամագիծ՝ 21.5	Հատքն՝ 1.2 մլմ., 609 կր.	Յատակը անորոյկ։ Յատակին՝ աստղաձև կրկնաւոր նախշեր, որոնք կրող շրջանակ սը կը գոյացնեն, վիզի բաժինը ի տարբերութիւն միաներուն՝ դէպի բոլորս բացուած
Բաղնիքի ջրոյի թասի նմանակ					
12	Բաղնիքի ջրոյի թասի նմանակ	Ի ՎԱՅՔԵԼՈՒՄՆ ՄՀԻ ՆԵՐՍԵՍԻԱՆ ԹԻՎ ՈՃԿՈՒՆ [Թ/Վ միացուած]	Բաժը՝ 8, տրամագիծ՝ 19	Հատքն՝ 3 մլմ., 879 կր.	Ուղիշ տեսակ է, անորոյկ յատակ, բերանին երկու զօտի նախշ, ա.ին մէկ մասը գրողիւն
Բաղնիքի տակիք					
13	Բաղնիքի տակի	ՏԻՔԻԱՆՈՒՅԻՆ 1901 [Ի/Ի միացուած]	Բրձրքն՝ 21, յատակի տարածք՝ 25x11.2, կախարիչի ներքին տարածք՝ 24x11.5	Հատքն՝ 0.9, մլմ., 1216 կր.	4 ուղբերու (դեղին պղինձ) վրայ դրուած, գետնէն մօտ 3 սմ. բարձրութեամբ, կախարիչին բաժինը լաւապէս ուռցիկաւորած, անկիւնները լաւապէս կրողցուած են
14	Բաղնիքի տակի	ՄԻՆԱ ԹՈՒԹԻ/ԻՆՃԵԱՆ 1906 [Ի/Ի միացուած]	Բրձրքն՝ 21, յատակի տարածք՝ 23x11.5, կախարիչի ներքին տարածք՝ 22.5x11	Հատքն՝ 09-12 մլմ., 1035 կր.	4 ուղբերու (դեղին պղինձ) վրայ դրուած, գետնէն մօտ 3 սմ. բարձրութեամբ, կախարիչին բաժինը լաւապէս ուռցիկաւորած
Այլաչափ տափակ պնակներ					
15	Փոքր	ՍՂԱԿՏԵՍԻ ԵՐԻՒԱՅ ԵՂԵՍԿԻ ՎՍՏՈՒԱՅՏՈՒՐ	Բրձրքն՝ 21, յատակի տրամագիծ՝ 8, բերանի տրամագիծ՝ 16	Հատքն՝ 1.4 մլմ., 193 կր.	Յատակին կնիք-նախշ
16	Փոքր	Մէկ անընթեռնելի արձանագրութիւն, երկրորդը՝ արաբերէն՝ حنا كرسى	Բրձրքն՝ 2.3, յատակի տրամագիծ՝ 7.5, բերանի տրամագիծ՝ 15	Հատքն՝ 1.5 մլմ., 136 կր.	Յատակին կնիք-նախշ
17	Փոքր	ԹՈՒՆԻՍ/ԱՃԱՆ/Ի ՈՐԴԿԻ ԵՐԻՒԱ [Մ/Ա, Ն/Ի, ՈՐ, Դ/Ի միացուած]	Բրձրքն՝ 21, յատակի տրամագիծ՝ 7.1, բերանի տրամագիծ՝ 14.55	Հատքն՝ 1.7 մլմ., 175 կր.	Յատակին կնիք-նախշ։ Ճն՝ վերածուած է շատ գեղեցիկ թռչունի
18	Փոքր, քիչ մը վրաստող	ՄՐՏՍՅԻ ԱՎՐԵ [Ս/Ի միացուած]	Բրձրքն՝ 2.5, բերանի տրամագիծ՝ 17	Հատքն՝ 1.5 մլմ., 217 կր.	Յատակը անորոյկ
19	Փոքր	ՄԱՀՏԵՍԻ ՎԱՐՈՒՊԵՏ [Մ/Ա, Ս/Ի, ԱՐ միացուած]	Բրձրքն՝ 2, յատակի նստածք՝ 8.5, բերանի տրամագիծ՝ 16	Հատքն՝ 1.5 մլմ., 176 կր.	Յատակը նախշաւոր

20	Փորձ	ՊԱՐՏԱՍԱՐ [ԱՐ միացում]		Բրձրթև՝ 2.5, յատակի նստումը՝ 8.5, բերանի տրամագիծ՝ 17.5	Հատթև՝ 1 մմ., 176 կր.	Ցատակը նախշում, թեքում բաժիկ ամբողջությամբ ուռուցիկում
21	Փորձ, քիչ մը փոստոր	ԱՍԱՆ		Բրձրթև՝ 3, յատակի նստումը՝ 9, բերանի տրամագիծ՝ 17	Հատթև՝ 1.1 մմ., 210 կր.	Ցատակը նախշում
22	Փորձ	ԿԱՐԱՊԵՏ [ԱՐ միացում]		Բրձրթև՝ 2.5, յատակի նստումը՝ 8.5, բերանի տրամագիծ՝ 17.5	Հատթև՝ 1.2 մմ., 203 կր.	Անընթեռների կիկը՝ պրունկին
23	Փորձ	ԳԻՐԳՈՐԻ ՈՐԴԴԻ ՄՂՏԵՍԻ ՂԱԶԱՐ [ՈՐ, ՈՐ, ԴԻ, ԱՐ միացում] محمد اسحق كجالي سنة 1298ھ		Բրձրթև՝ 1.5, բերանի տրամագիծ՝ 18.2	Հատթև՝ 1.5 մմ., 316 կր.	
24	Փորձ	Անընթեռների		Բրձրթև՝ 3, յատակի նստումը՝ 11.5, բերանի տրամագիծ՝ 19	Հատթև՝ 1.5 մմ., 255 կր.	
25	Միջակ	XIZIMOYPAT [= խժԻ ՄՈՒՐԱԹ/հաճի Մուրատ]		Բրձրթև՝ 3.5, յատակի նստումը՝ 11.5, բերանի տրամագիծ՝ 21	Հատթև՝ 1.8 մմ., 414 կր.	Ցատակին նախշ կնքում
26	Միջակ	Այ ՃԱՌԱ ՄԱՐԻՔԶ՝ [ԱՐ միացում]		Բրձրթև՝ 3, յատակի նստումը՝ 11, բերանի տրամագիծ՝ 20.5	Հատթև՝ 1.2 մմ., 324 կր.	Ցատակին նախշ կնքում
27	Միջակ	ՀՈՐՈԲԱՆ ՄՀԻ ԴԱԿԻԹ		Բրձրթև՝ 3.5, յատակի նստումը՝ 11, բերանի տրամագիծ՝ 21	Հատթև՝ 1 մմ., 388 կր.	Ցատակին նախշ կնքում
28	Փորձ	ՄՀԻ ԵՌԻՍՈՒՐԻՖԻ ՈՐԴԻ ՄՀԻ ԱԲՐԱՀԱՄ [ՈՐ, ՈՐ, ՈՐ, ԴԻ, ԱՄ միացում]		Բրձրթև՝ 2, յատակի նստումը՝ 7.5, բերանի տրամագիծ՝ 14.2	Հատթև՝ 0.5, մմ., 133 կր.	Ցատակին նախշ կնքում
29	Պզտիկ	ՄՀԻ ԵՂԵՍԻ ՈՒՆ Դ. = [1785] արաբերեն թուական՝ 1841		Բրձրթև՝ 2.5, յատակի նստումը՝ 7.5, բերանի տրամագիծ՝ 14.5	Հատթև՝ 0.5 մմ., 192 կր.	Շատ գերեցիկ էւ նորոք զարդանակներ
30	Պզտիկ փոստոր	Կնիդը արաբերեն ٱرسن ٱى վը՝ ոչխարի նմանող	Ցատակի նստումը՝ 7.5, բերանի տրամագիծ՝ 14		Հատթև՝ 0.8 մմ., 141 կր.	Տափակ յատակին նախշեր, դեպի ներս ցցում թարձրություն

² Քս կարելի է նաեւ \$ կարդալ:

31	Միջակ չափի, փոսառ	2 կնիք, մեկը՝ արաբերեն بَيْتُ الْحَيَّةِ կայ նաև խորհրդանշան մը՝ ռիթարի նմանող, կայ նաև հայերեն կնիք՝ ՄՐԱՍԱՆ ՊԼՈՒՄ, փորձեր՝ 923 ³	Յատակի նստաճած՝ 8, բերանի տրամագիծ՝ 15.2	Հաղթն.՝ 1 մմ., 221 կր.	Տախակ յատակին նախշեր, ռէսի ներս ցցաւ թարձորութիւն
32	Միջակ չափի, փոսառ	ԳՐԻԳՈՐ ԹԱՄԱՆԵՄԱՆ, կերորնը՝ 929,	Յատակի նստաճած՝ 8, բերանի տրամագիծ՝ 15.2	Հաղթն.՝ 1 մմ., 266 կր.	Կնիքին շուրջ 2 խորիւրանշան, որոնք կրկնաւ ին 4սկան անգաւ ⁴
33	Միջակ չափի եւ խորութեանք	ԳՐԻԳՈՐ ԹԱՄԱՆԵՄԱՆ, կերորնը՝ 929	Յատակի նստաճած՝ 12.5, բերանի տրամագիծ՝ 20	Հաղթն.՝ 1 մմ., 286 կր.	Կնիքին շուրջ 2 խորիւրանշան, որոնք կրկնաւ ին 4սկան անգաւ
34	Միջակ չափի եւ խորութեանք	ԳՐԻԳՈՐ ԹԱՄԱՆԵՄԱՆ, կերորնը՝ 929	Յատակի նստաճած՝ 11, բերանի տրամագիծ՝ 20	Հաղթն.՝ 1 մմ., 266 կր.	Կնիքին շուրջ 8 սիմար, 4սկան կրկնաւ
35	Միջակ չափի եւ խորութեանք	ԳՐԻԳՈՐ ԹԱՄԱՆԵՄԱՆ, կերորնը՝ 929	Յատակի նստաճած՝ 12.5, բերանի տրամագիծ՝ 22	Հաղթն.՝ 1.1 մմ., 370 կր.	Կնիքին շուրջ 8 սիմար, 4սկան կրկնաւ
36	Միջակ չափի եւ խորութեանք	ԳՐԻԳՈՐ ԹԱՄԱՆԵՄԱՆ, կերորնը՝ 929	Յատակի նստաճած՝ 12.5, բերանի տրամագիծ՝ 22	Հաղթն.՝ 1.1 մմ., 393 կր.	Կնիքին շուրջ 8 սիմար, 4սկան կրկնաւ
37	Միջակ չափի եւ խորութեանք, անողրկ	ՄԵԼՔՈՒՆ ՈՐՈՂԻ ՄՀԻ ՍԵԼՎԵՐ ՈՒՀԻ [1270+551=1821], [ՈՐ, ԴԻ միացաւ]	Յատակի նստաճած՝ 14, բերանի տրամագիծ՝ 23	Հաղթն.՝ 1.5 մմ., 354 կր.	
38	Միջակ չափի եւ խորութեանք, անողրկ	Ի ՎԻԵԼՈՒՍՆ ՄՀԻ ՄԿՈՏԻՉ ԹՎ ՌՃՃ [1156+551=1707], [ՈՐ, Թ/Վ միացաւ]	Յատակի նստաճած՝ 15, բերանի տրամագիծ՝ 24	Հաղթն.՝ 1.3 մմ., 440 կր.	Յատակին կնիքի պէս նախշ, միւր բաժնիին իրար ցցաւ գտնելի կանարաւն, խողռնը
39	Մեծ չափի, միջակ խորութեանք, անողրկ	ԱՆԵՏԻՍ ՈՐՈՂԻ ԵՐԳԱՐ [ԴԻ, ԱՐ միացաւ]	Յատակը անողրկ, կիսաթեք, նստաճածը՝ 18.5, բերանի տրամագիծ՝ 27	Հաղթն.՝ 1.9 մմ., 649 կր.	
40	Մեծ չափի, միջակ խորութեանք	ԱՐԱՐ ԾՂԻԿ ՎԱՐԱՊԵՏ, [արաբերեն] 1268 [=1852], [ԱՐ, միացաւ]	Յատակի նստաճած՝ 17.5, բերանի տրամագիծ՝ 29.5	Հաղթն.՝ 1.1 մմ., 924 կր.	Շրթանքին միջարկաւ զարդանախշեր
41	Մեծ չափի, միջակ խորութեանք	ԱԼԼԱՊԵՏԻ ՈՐՈՂԻ ԱՆԵՏԻՍ [ՈՐ, ԴԻ միացաւ]	Յատակի նստաճած՝ 20, բերանի տրամագիծ՝ 32.5	Հաղթն.՝ 1.9 մմ., 1046 կր.	Գտնելի արձանագրութիւն, յատակին նախշ-կնիք

³ Այս հայերէն եւ նախորդ արաբերէն կիրթները կը բացակային Հրազդան Թրքմանակի կազմած մեծաթիվ Գաղթնքեախներէն. Այնթապ, Ռամսակու-Հալէպ/Թե Կալեմկարիան: *Avnab-Damascus-Aleppo*, Տիգրան Մեծ, Երեսն-Հալէպ, 2016 հասրոտէ:

⁴ Այս կնիքը կը բաղադրակալի Թոքմանցեանի վերոյիշեալ հաստոյրէն:

42	Մեծ չափի, վորդ խորությունը	ԱՐՈՒԴԹԻՆ, Թ/Վ ՌԵՏԳ [1724] [ԱՐ.՝ ՈՒ՝, Թ/Վ միացում] արաբերեն ձեռագիր՝ صاحبہ الشیخ ابراهيم ابن محمود	Յատակի նստածք՝ 23.5, բերանի տրամագիծ՝ 36.5	Հատքն՝ 1.7, 1343 կր.	Գեղեցիկ նախշեր + վերորմն վեցթեանի աստղ, պնակն շղթունքին 6 խորիորակիչ-նախշեր
43	Մեծ չափի, միջակ խորությունը	ԴՏԿ Է ԷՄ Ի ԱՐԻԲ կը [Ա. Ր եւ Բ միացում] Յատակին կայ Բ. գրություն՝ ԶԵՏԿ Է ԷՄ Ի ՊԻՆ ԱՐԻԲ ՅԿԲ Կրաբերեն գրություն՝ عبد البديع الدفر	Յատակի նստածք՝ 24, բերանի տրամագիծ՝ 35	Հատքն՝ 1.2 սլմ., 1141 կր.	Երկու ձեռագրերը նոյնական են եւ գեղեցիկ
44	Ստաման	Կնիք՝ ՊԵՏՐՈՍ ՀՃՆԵԱՆ [վերորմնի գրությունը՝ անլնթ.՝]	Բրձրթն՝ 11.5, բրձրթն՝ 0.6 սլմ., յատակ՝ 8.5, բերանի տրամագիծ՝ 16.5	Հատքն՝ 1 սլմ., 375 կր.	
45	մոմակալ	ՅԻԶՏԿ Է ՄԱՆՈՒԿԻ ՈՐՈԴԻ ԱՄՐԳԻՄԻՆՆ ՍԲ ԼԵՂԱՄԱԽ Ի ԴԻՆ ՍԲ ԱՃԱՃԱԿ ԳԵՐԵԳԱՄԱԽՆ Թ/Վ ՌԲՃԱԽՆ [1201+551=1752]	Բրձրթն՝ 14, յատակի նստածք՝ 10	Հատքն՝ 1-2.6 սլմ., 314 կր.	
46	պտղաման	Կնիք արաբերեն՝ سارکيس جمران [վերորմն աղիւծ	Բրձրթն՝ 12.5, բերան՝ 30x20.5,	Հատքն՝ 1 սլմ., 675 կր.	
47	Մեծ, խորունկ	ՄԱՏԱԽ ՄԱՐՏԻՈՐՈՍԻ ՈՐՈԴԻ ԳԱՍԱԿՐ [ԱՐ.՝ ՈՐ՝, ՐԵԻՐ, ԱՐ միացում]	Յատակը՝ 17, բերանի տրամագիծ՝ 30, բրձրթն՝ 8,	Հատքն՝ 3 սլմ., 1344 կր.	Նուրբ. գեղեցիկ նախշեր՝ մէջը եւ խորքը
48	Լուսցանան	ԱՄՐԳԻՍ [Գ/Ի միացում]	Բրձրթն՝ 9.5, տրամագիծ բերան՝ 34, յուկ՝ 17.5,	Հատքն՝ 3 սլմ., 2080 կր.	
49	Կամխորիչով կաթոսայ	KOZANTH XATZISTEΘANI 1801 ⁵ [= Կոստանդի Խաճիսթեֆան]	Բրձրթն՝ 22, ուղիւ՝ 25, կախարիչի բերան՝ 19.5	Հատքն. 0.8 սլմ., 1637+392 կր.	

⁵ Թորմանեանի վերոյիշեալ գիրքը չունի այս արձանագրոյին անունն ու կնիքը:

⁶ Թիւ 25 եւ 49 իրերուն արձանագրութիւնը վերծանեց Յովիկ Գասպարեան, որ իր Երկյոտլին մէջ (9 Ոգոստոս 2022) կը նշէ նաեւ թէ թիւ 49ի արձանագրութեան մէջ «կայ ուղագրական սխալ K (o) ΣΤΑΝΤΗ ա՛նտը Էր գրուի օտը»:



Նկար 1. ՅԱԿՈՐ ԳԱՀԿԵՃԻԵԱՆ+ կնիք՝ ՍԱՐԳԻՍ



Նկար 2. ՂԱԶԱՆՃԸԵԱՆ ԱԿՈՐ + արաբերէն թուական 1291+ կնիք՝ ՅԱԿՈՐ



Նկար 3. Կնիք՝ ԱՏՈՒՐ



Նկար 6. ԱՊԷՏ՝



Նկար 7. ԳՐԻԳՈՐԻ ՈՐԴԻ ՎԱՐԴԱՆ եւ արաբատառ անընթեռնելի գրություն

¹ Թիւ 4 եւ 5 տիւիթները հայկական արձանագրություն չունին:



Նկար 8. ԱՆՆԱ ԽԱԼՕԵԱՆ 1903



Նկար 9. ԼՈՒՍԵԱՅ ԳԱՀՎԷՃԵԱՆ 1895



Նկար 10. ԱՆՆԱ ՉՈՒՎԼԱԿԵԱՆ 1903



Նկար 11. ԽԱՆԸՄ [արաբերեն] 1896



Նկար 12. Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ՄՀԻ ՆԵՐՍԷՍԻՆ ԹՎ. յՈՃԿԴ-ԻՆ



Նկար 13. ՏԻՔՐԱՆՈՒՅԻՆ 1901



Նկար 14. ՄԻՆԱ ԹՈՒԹԻՒՆՃԵԱՆ 1906



Նկար 15. ՄԼԱԿՆԵՍԻ ԵՂԻԱ ԵՂԲԱՅԻ ԱՄՏՈՒԱԾԱՏՈՐ



Նկար 16ա. حنا كريبس [Հաննա Կարպիս^ա]



Նկար 16բ. Գաղտնագի՞ր, անընթեռնելի



Նկար 17ա. ԹՈՒՂՄԱՃԱՆՏԻ ՈՐՐԻ ԵՂԻԵԱ



Նկար 17բ. Թռչունի վերածուած ճ գիրը



Նկար 18. ՄՂՏՍԻ ԱԿՈՐ



Նկար 19. ՄԱՀՏԵՍԻ ԿԱՐԱՊԵՏ



Նկար 20. ՊԱՂՏԱՍԱՐ



Նկար 21. ԱՍԼԱՆ



Նկար 22. ԿԱՐԱՊԵՏ



Նկար 23ա. 1298 محمد اسحق كیالی [Մուհամմատ Իսհաք Քայյալի]



Նկար 23բ. ԳԻՐԳՈՐԻ ՈՐԴԻ ՄՂՏԵՍԻ ՂԱԶԱՐ



Նկար 24. Գաղտնագի՞ր, անընթեռնելի



Նկար 25. ΧΤΖΙΜΟΥΡΑΤ [= ԽԾԻ ՄՈՒՐԱԹ/հաճի Մուրատ]



Նկար 26. Այ ծԱՌԱ ՄԱՐԻՔ



Նկար 27ա. ՀՕՌԹՐՍԸՄԱ



Նկար 27բ. ՄՀԻ ԴԱՎԻԹ



Նկար 28. ՄՀԻ ԵՈՒՍՈՒՖԻ ՈՐԴԻ ՄՀԻ ԱՐԱՀԱՄ



Նկար 29. ՄՀԻ ԵՂԻԵԱԿ ՌԱԼԴ



Նկար 30 և 31. بابا ارسلانيان [Պապա Արսլան] և ԱՐՍԼԱՆ 923 ՊԱՊԱ



Նկար 32. Առիծի պատկեր, Նկար 33-36. ԳՐԻԳՈՐ ԹԱՆԱՇԵԱՆ 929



Նկար 37. ՄԵԼՔՈՆԻ ՈՐԴԻ ՄՀԻ ՍԵԼՎԵՐ ՌՄՀԻ



Նկար 38. Ի ՎԱԿԵԼՈՒՄՆ ՄՀԻ ՄԿԸՐՏԻՉ ԹՎ ՌՃԾԳ



Նկար 39. ԱԻԵՏԻՍԻ ՈՐԴԻ ԵԴԳԱՐ



Նկար 40. ԱՐԱՊ ՕՂԼԻ ԿԱՐԱՊԵՏ, [արաբերէն] 1268



Նկար 41. ՆԱՀԱՊԵՏԻ ՈՐԴԻ ԱԴԵՏԻՍ



Նկար 42ա. ԱՐՈՒԹԻՆ ԹՎՈՇՀԳ



Նկար 42բ. صاحبه الشيخ ابراهيم ابن محمود [Սահիպուիու Էլշէյխ Իպրահիմ Իպն Մահմուտ]



Նկար 43ա. յՏԿԷ Ե[րուսաղէ]Մ իՍՐԲ լկբ



Նկար 43բ. ՅՏԿԷ Ե[րուսաղէ]Մ իդՈՆ ՍԲ ՅԿԲ



Նկար 43գ. عبد البديع الدفر [Ապտուկ Պատի' Է]Տաֆար]



Նկար 44. ՊԵՏՐՈՍ ՀՃՆԵԱՆ



Նկար 45. ՅԻՇՏԿ ԷՄԱՆՈՒԿԻ ՈՐԴԻ ՍԱՐԳԻՍԻՆ ՍԲ յԷՐՂՄԱյ Ի ԴՈՆ ՍԲ.
ԱՅԱՃՆԱյ ԳԵՐԵԳՄԱՆԻՆ ԹՎ ՌԲՃԱԽՆ



Նկար 46. سارکيس جميزجيان [Սարգիս Ճեմապերճեան]



Նկար 47ա. ՄՂՏՍԻ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՈՐԴԻ ԳԱՍԲԱՐ



Նկար 47բ. Ամանին կեդրոնական գեղեցիկ փորագրանկարը



Նկար 48. ՍԱՐԳԻՍ



Նկար 49. ΚΟΣΤΑΝΤΗ ΧΑΤΖΙΣΤΕΦΑΝΙ 1801 [= Կոստանդի Խաճիսթեֆան]